ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Հայկ Հարազատի Մարտիրոսյանի «ԼՈԼԻԿԻ ՆՈՐ ՈՂԿՈՒԶԱՎՈՐ ՀԻԲՐԻԴՆԵՐԻ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԵՐՄԱՏՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ» թեմայով ատենախոսության վերաբերյալ, Զ.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն, բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հայկ Հարազատի Մարտիրոսյանը թեկնածուական ատենախոսությունը ներկայացրել է 110 համակարգչային էջի սահմաններում: Ատենախոսությունը բաղկացած է 6 գլուխներից համապատասխան ենթաբաժիններով նաև ընդհանուր եզրակացությունից, առաջարկությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը ներառում է 16 աղյուսակ, 14 գծապատկեր և 7 նկար:

Ատենախոսության թեման արդիական է և բավական կարևոր, քանի որ ջերմատնային տնտեսություններում միավոր մակերեսից ստացվող վաղ և բարձր բերքը հանդիսանում է վճռական գործոն տնտեսական բարձր շահույթ ստանալու համար: ՀՀ և արտերկրի սելեկցիոն կայաններում անընդհատ ստեղծվում են բազմաթիվ նոր հիբրիդներ, որոնց հնարավորինս արագ փորձարկումն ու արտադրությանն առաջարկելն ունի վճռական նշանակություն եկամտաբերության բարձրացման գործում:

Այս տեսանկյունից հայցորդի կողմից հետազոտության մեջ ներգրաված պոմիդորի հիբրիդները նորույթ են: Հայցորդը դրանք հետազոտել է ինչպես գրունտային, այնպես էլ հիդրոպոնիկ ջերմատների պայմաններում:

Ատենախոսությունը շարադրված է մեթոդապես ճիշտ՝ ներառելով թեկնածուական ատենախոսությունների ներկայացման համար պահանջվող բոլոր բաժինները: Սակայն ատենախոսությունում առկա են մասնագիտական, տեխնիկական և ուղղագրական որոշակի թերություններ՝

1. Թեմայի վերնագիրը ճիշտ ձևակերպված չէ: Ճիշտ ձևակերպումը հետևյալն է՝ **<<Ողկուզավոր լոլիկի նոր հիբրիդների աճի և զարգացման**

առանձնահատկությունները Հայաստանի ջերմատներում մշակության դեպքում>>:

2. էջ 25-ում ներքևից 12-րդ տող, էջ 78-ում վերևից 5-րդ տող - գրված է կոկոպիտի մատերը, պետք է լինի աճեցման պարկեր կոկոսի մանրաթելով: Նույն էջում, ներքևից 2-րդ տող՝ գրված է գարնանային շրջապտույտ, պետք է լինի գարնանա-ամառային շրջապտույտ:
3. էջ 27, վերևից 3-րդ տող - գրված է ...յուրաքանչյուր տարբերակից 10-ական բույսերի վրա: Պետք է լինի ... յուրաքանչյուր տարբերակից 10-ական հաշվարկային բույսերի վրա:
4. էջ 32, ներքևից 10-րդ տող – նշված է ...բույսերը եղել են ավելի կոմպակտ: Տերմինը հայերեն չէ: Պետք է լինի՝ հավաք:
5. Հետազոտությունների կատարման մեթոդների բաժնում նշված է, որ լոլիկի ողկույզները ձևավորվել են 5-6-ական պտուղներով, սակայն էջ 44-ում առկա է 7 պտղով ողկույզի նկար :
6. Աղյուսակ 3.4-ը կրկնվում է 46 և 49 էջերում:
7. էջ 51, ներքևից 12-րդ տող – Նշված է ... ֆուզարիոզ թառամում: Դրանք նույն հասկացություններն են:
8. էջ 74, աղյուսակ 5.4 – ում գրված է **Ինքնարժեքը, գ/հազ. դրամ**: Ինքնարժեքը ներկայացվում է **դրամ/կգ** կամ, եթե գրվում է ցենտների հաշվով, ապա պետք լինի՝ **հազ. դրամ/գ:**

Պետք է նշեմ, որ աշխատանքը շատ կշահեր, եթե գլուխ 6-ում՝ <<Լոլիկի հետազոտվող ողկուզավոր հիբրիդների արտադրական փորձարկումը թաղանթապատ հիդրոպոնիկ ջերմատան պայմաններում>> բաժնում ներկայացված լիներ նաև ուսումնասիրված հիբրիդների աճի ու զարգացման տվյալները:

Աշխատանքը զերծ չէ նաև մասնագիտական թերություններից: Այսպես.

1. էջ 27-ում և էջ 48- ի աղյուսակ 3.3-ում լոլիկի ֆենոփուլերը ամբողջական և հստակ նշված չեն: Աշխատանքը կշահեր, եթե նշված լինեին ցանքի ժամկետ, ծլում, ծաղկում, պտղակալում (կամ տվյալ փուլի սկիզբը կամ փուլի զանգվածային վիճակը), հասունացման սկիզբ, բերքահավաքի սկիզբ և բերքահավաքի ավարտ ֆենոփուլերը:

2. Էջ 33, աղյուսակ 3.1-ում և տեքստում՝ նշված է **միջհանգույցների երկարություն, միջողկույզների երկարություն**: Զնակերպումը սխալ է, պետք է լինի **միջհանգուցային հեռավորություն** և **միջողկուզային հեռավորություն**:
3. Էջ 33, աղյուսակ 3.1 – Ցողունի միջին երկարությանը վերաբերող ցուցանիշներն անհասկանալի են: Ցողունի նման կարճ երկարություն պոմիդորի հասուն բույսը չի կարող ունենալ: Նաև նշված չէ, թե բույսի ֆենոլոգիական որ փուլում են չափումները կատարվել:
4. Էջ 35, աղյուսակ 3.2 – ում նշված պտղի միջին զանգվածի դեպքում հնարավոր չէ պտղի նշված միջին բարձրություն և տրամագիծ լինի: Նաև գրունտային մշակության երկու շրջապտույտների թվական տվյալները աղյուսակում ներկայացված են միասին:
5. Էջ 58, աղյուսակ 4.1-ում <<Պտուղների քանակը ողկույզում, հատ>>: Հաշվումների արդյունքում այս ցուցանիշը միջինացված թիվ է և չի կարող այս դեպքում գրվել 5-6 հատ: Նաև տեքստում և աղյուսակում նշված է **Ընդհանուր բերք**, որի փոխարեն պետք է լինի **Ընդամենը բերք**:
6. Էջ 26 և Էջ 78: Հիդրոպոնիկ ջերմատներում պոմիդորի տնկման սխեման նշված է (90+60)x50 սմ: Նման տնկման սխեման հիդրոպոնիկ ջերմատների համար կիրառելի չէ:

Սեղմագիրը հայցորդը շարադրել է մեթոդապես ճիշտ: Այն ներառում է ատենախոսության բոլոր բաժինները և տալիս է հստակ ու հակիրճ պատկերացում կատարված աշխատանքի վերաբերյալ: Սակայն սեղմագրում ևս տեղ են գտել որոշ մասնագիտական և տեխնիկական թերություններ, որոնց որոշ մասը մեխանիկորեն փոխանցվել է ատենախոսության նյութերից: Այսպես.

1. Էջ 5, ներքևից 5 տող, Էջ 7, ներքևից 8 տող և էջ 18, վերևից 10-րդ տող – գրված է **կոկոպիտե մատեր**, որը հայերեն չէ:
2. Էջ 12, աղյուսակ 1 – Պտուղների քանակը ողկույզում չի կարող լինել 5-6: Այն միջինացված թիվ է:
3. Էջ 16, վերևից 10-րդ տող – <<**Գարնանային շրջապտույտ**>> հասկացություն գոյություն չունի: Կա **գարնանա-ամառային** շրջապտույտ հասկացություն:
4. Էջ 18, վերևից 11-րդ տող – Մեթոդապես սխալ է համեմատել գրունտային ջերմատան երկու տարբեր շրջապտույտներից ստացված

ուսումնասիրությունների արդյունքները հիդրոպոնիկ ջերմատան, այն էլ արտադրական փորձարկման այլ շրջապտույտի արդյունքների հետ:

Հրատարակված գիտական հոդվածներ – Կատարված հետազոտության արդյունքներից և ստացած տվյալներից ելնելով հայցորդը հրատարակել է 3 գիտական հոդվածներ, որոնցից մեկը անգլերեն լեզվով:

Պետք է նշեմ, որ Հայկ Հարազատի Մարտիրոսյանի ներկայացրած հետազոտական աշխատանքում առկա վերը նշված թերությունները և բացթողումները շտկելի են և ամենևին էլ չեն նսեմացնում կատարված աշխատանքի գիտական և արտադրական արժեքը:

Գտնում եմ, որ գրախոսվող ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից տվյալ կարգի գիտական աշխատություններին ներկայացվող պահանջներին և աշխատանքը կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակ Հ. Հ. Մարտիրոսյանն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս, «Վենլո» հ/ձ ՍՊԸ
արտադրության գծով մենեջեր, գյուղ. գիտ. թեկնածու՝ /Ա. Հ. Ասատրյան/

Գյուղ. գիտ. թեկնածու Ա. Հ. Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ
«Վենլո» հ/ձ ՍՊԸ տնօրեն /Ա. Հովհաննիսյան/

15.07.2024թ.